Հավելված N 435
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հանրային ներդրումների վարչության (այսուհետ՝ Վարչություն) կանաչ տնտեսության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 23-32.13-Ղ4-4)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները՝

1) ապահովում է կանաչ ու կայուն տնտեսական զարգացման քաղաքականության, կանաչ տնտեսության զարգացմանը նպաստող համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշակման և իրականացման աշխատանքները.

2) ապահովում է արևային էներգետիկայի տեխնոլոգիական զարգացմանը նպաստող իրավական ակտերի մշակման աշխատանքները"

3) ապահովում է էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի և իրականացման անհրաժեշտ միջոցառումների մշակման աշխատանքները.

4) ապահովում է բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման հնարավորությունների՝ դրանից բխող քաղաքականության և իրավական ակտերի ուսումնասիրման և մշակման աշխատանքները.

5) ապահովում է տնտեսավարող սուբյեկտներին կանաչ տնտեսությանն անցման գործընթացի նպաստման աշխատանքները.

6) կազմակերպում է կանաչ և կայուն տնտեսական զարգացմանը միտված իրազեկման և ուսուցողական աշխատանքներ"

7) ապահովում է կանաչ տնտեսությանն առնչվող ոլորտային ռազմավարությունների ուսումնասիրության իրականացման աշխատանքները"

8) ապահովում է կանաչ ներդրումների, ինչպես նաև կանաչ բաղադրիչով նորարարական լուծումներով արտադրության կազմակերպումը խթանող քաղաքականության և բարենպաստ օրենսդրական դաշտի մշակման աշխատանքները:

Իրավունքները՝

• համապատասխան մարմիններից պահանջել կանաչ տնտեսության ուղղությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և հիմնավորումներ.
• համապատասխան մարմիններից պահանջել արևային էներգետիկայի տեխնոլոգիական զարգացմանը նպաստող իրավական ակտերի մշակման վերաբերյալ տեղեկություններ և հիմնավորումներ
• հրավիրել կանաչ տնտեսության ուղղություններին առնչվող հարցերին վերաբերյալ աշխատանքային քննարկումներ.
• արևային էներգետիկայի տեխնոլոգիական զարգացմանը նպաստող իրավական ակտերի մշակման նպատակով կազմակերպել այլ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ մասնագիտական քննարկումներ"
• պահանջել բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման հնարավորությունների դրանից բխող քաղաքականության և իրավական ակտերի ուսումնասիրման և մշակման վերաբերյալ լրացուցիչ հիմնավորումներ.
• պահանջել տեղեկություններ կանաչ և կայուն տնտեսական զարգացմանը միտված իրազեկման և ուսուցողական աշխատանքների վերաբերյալ"

Պարտականությունները՝

• ստուգել և ամփոփել համապատասխան մարմինների կողմից ներկայացված՝ կանաչ տնտեսության ուղղությունների վերաբերյալ մասնագիտական դիրքորոշումների մշակման աշխատանքները.
• վերլուծել Բաժնի գործառույթները կանոնակարգող և գործառույթների իրականացմանն առնչվող իրավական ակտերը.
• կատարել էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի մշակման և իրականացման նպատակով համապատասխան վերլուծություններ .
• ուսումնասիրել և վերլուծել կանաչ տնտեսության ուղղությունների վերաբերյալ տրամադրված դիտարկումներն ու առաջարկությունները.
• կանաչ տնտեսությանն անցման, կանաչ ներդրումների, ինչպես նաև կանաչ բաղադրիչով նորարարական լուծումներով արտադրության կազմակերպման առնչությամբ տնտեսավարող սուբյեկտներին տալ խորհրդատվական եզրակացություններ.
• ուսումնասիրել միջազգային փորձը կանաչ ու կայուն տնտեսական զարգացման վերաբերյալ և ներկայացնել առաջարկություններ.
• վերլուծել կայուն տնտեսական զարգացմանը միտված իրազեկման և ուսուցողական աշխատանքները"
• տալ եզրակացություն կանաչ և կայուն տնտեսական զարգացմանն առնչվող դասընթացների կազմակերպման վերաբերյալ.
• առաջնորդվել և պահպանել Բաժնին վերապահված իրավական ակտերով սահմանված կարգն ու ժամկետները.
• ստուգել համապատասխան մարմինների կողմից տրամադրված կանաչ տնտեսության ուղղությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները և հիմնավորումները.
• տալ մասնագիտական եզրակացություններ համապատասխան մարմինների կողմից ներկայացված կանաչ տնտեսության ուղղությունների վերաբերյալ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ: